# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## «ՎՐԱՍՏԱՆ»՝ ԻՄ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՕՐՐԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թերթ, որը եղել է իմ ժուռնալիստական օրրանը՝ ուսուցիչ ունենալով հորս՝ գրող-հրապարակախոս Կորյուն Ազրոյանին եւ անվանի գրող Բենիկ Սեյրանյանին, ում բաժնի գրական աշխատողը դարձա ես:

Երեկվա պես հիշում եմ 1964 թվականի դեկտեմբերի 1-ը, երբ «Սովետական Վրաստան» թերթի խմբագիր Յակոբ Բլրցյանն ինձ ընդունեց աշխատանքի: Յորս հետ էի գնացել խմբագրություն: Բնական է, որ հենց նա էլ առաջինը շնորհավորեց՝ շեշտելով, որ մուտք եմ գործում մի բնագավառ, որտեղ իրեն լավ են ճանաչում, որ պիտի աշխատեմ անմնացորդ նվիրումով, լինեմ ազնիվ ու անաչառ: Յետո Բլրցյանն ինձ ներկայացրեց իմ ապագա գործընկերներին: Սենյակում հավաքվել էին խմբագրի տեղակալ Գրիգորի Ակոպովը, թերթի պատասխանատու քարտուղար Գուրգեն Բախշեցյանը, բաժինների վարիչներ Բենիկ Սեյրանյանը, Գեւորգ Խաչատրյանը, Նունե Մելիքյանը, Գոհար Պողոսյանը, գրական աշխատողներ Յարություն Սերոբյանը, Սերգեյ Առաքելյանը, ոճաբան Եգոր Յարթենյանը: Մյուսներին, ցավոք, չեմ հիշում, հիսուն տարուց ավելի է անցել:

Մի երկու խոսք էլ ուզում եմ ասել «Վրաստան» թերթի այսօրվա խմբագրի՝ Վան Բայբուրթյանի մասին: Իհարկե, ես բախտ չեմ ունեցել նրա օրոք աշխատել «Վրաստան» թերթում: Յիշում եմ մեր դպրոցից՝ այսօր Ասաթիանու (նախկին՝ Էնգելսի) փողոցի վերջում գտնվող 5-րդ արականից, ապա եւ Լերմոնտովի վրա գտնվող թիվ 40 դպրոցից: Բայց նրա հետ համագործակցել եմ: «Յամագործակցել» շատ է ասված: Պարզապես, մի երկու-երեք անգամ նրա խնդրանքով նյութեր եմ գրել «Վրաստան» թերթի համար:

Նախ, ասեմ, որ Վան Բայբուրթյանին թերթի խմբագիր նշանակելու փաստն ինձ ե'ւ զարմացրեց, ե'ւ ուրախացրեց: Ինչո՞ւ զարմացրեց: Ասեմ: Զարմացրեց, որովհետեւ կոտրվեց տարիներ շարունակ գործող կարծրատիպը: Իմ երիտասարդության տարիներին, ասել կուզի՝ սովետական կարգերի ժամանակ, գրեթե առանց բացառության, թերթի խմբագիր էր նշանակվում կուսակցական գործիչ, ով, չգիտես որ մեղքի համար, պետք է պաշտոնանկ արվեր: Կենտրոնական թերթերի խմբագիրներին, նայած այդ խմբագրի «կալիբրից», ուղարկում էին որեւէ երկիր՝ որպես դեսպան, իսկ հանրապետություններում այդ մարդկանց նշանակում էին թերթի խմբագիր (Ասես՝ թերթը Քավարան լիներ): Ես ամենեւին էլ հավակնություն չունեմ կասկածի տակ վերցնել Բլրցյան-խմբագրի եւ ուրիշ խմբագիրների պրոֆեսիոնալիզմը: Քավ լիցի, մանավանդ որ, այս պարագայում խոսքը գնում է Բլրցյանից հետո նշանակված խմբագրի մասին: Իսկ նա, ի զարմանս ինձ, պրոֆեսիոնալ լրագրող էր՝ Վան Բայբուրթյանը, ով բավականին լավ դպրոց էր անցել «Սովետսկի սպորտ», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերում եւ վերջապես՝ ԱՊՆ-ում, Վրաստանի աշխարհահռչակ այդ գործակալության սեփական թղթակիցն էր: Բավականին պատասխանատու պաշտոններ: Ա՜յ, այս հանգամանքը ինձ զարմացրեց, երբ իմացա, որ «Խորհրդային Վրաստան» թերթի խմբագիր է նշանակվել... ժուռնալիստը: Այո', հենց այդ նշանակումը զարմացրեց ոչ միայն ինձ, այլեւ շատերին: Երեւի, այն տարիների Վրաստանի կոմկուսի ղեկավար (կարծեմ՝ Ջումբեր Պատիաշվիլին էր) լավ էր հասկանում մամուլի դերը եւ որոշեց չսպասել մինչեւ որեւէ կուսակցական չինովնիկ պաշտոնանկ արվի:

Վերը նշեցի, որ ինձ ուրախացրեց, երբ մի օր Բայբուրթյանը խնդրեց ծավալուն հոդված գրել ծնունդով թբիլիսցիներ էլիբեկյանների՝ Վաղարշակ էլիբեկյանի եւ նրա որդիներ Յենրիի ու Ռոբերտի նկարչական գերդաստանի մասին: Վաղարշակ էլիբեկյանը եւ նրա որդիները բավականին ճանաչված նկարիչներ էին ոչ միայն Խորհրդային Միությունում, այլեւ արտասահմանյան մի շարք երկրներում: Ես սիրով կատարեցի Վան Բայբուրթյանի խնդրանքը՝ հաճելիորեն պարզելով, որ Վաղարշակի կինը՝ տիկին Ֆլորան, Վանի բարեկամուհին է: Իրոք, զգացվում է Բայբուրթյանի պրոֆեսիոնալ լինելը:

Յաջորդ խնդրանքը, պետք է խոստովանեմ, ինձ զարմացրեց: Դա Ղարաբաղյան շարժման օրերին էր, երբ Վանը զանգեց ինձ եւ խնդրեց հարցազրույց ունենալ Ամենայն Յայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ: Մտովի թռա անցյալ դարի երեսնական թվականները եւ պատկերացրի, թե ինչ համարձակություն է պետք ունենալ՝ համատարած աթեիզմի տարիներին կուսակցական թերթում հարցազրույց տպագրել հարեւան երկրի կաթողիկոսի հետ: Դա հանդգնության աստիճանի համարձակություն էր: Բացի այդ, նման հարցազրույց վարելու համար նախ պետք էր վերադասի թույլտվություն ստանալ, իսկ այն տպագրելու համար՝ այլ ատյանի թույլտվությունն ունենալ: Պատկերացրեք, Վանին դա հաջողվեց, եւ ես հանդիպեցի ու զրուցեցի Վազգեն Ա Վեհափառ Յայրապետի հետ: Իսկ «Վրաստան» թերթի խմբագրին էլ, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, տպագրեց այդ ծավալուն հարցազրույցը, որը կրում էր «Յեռավոր ժամանակներից է գալիս մեր եղբայրությունը» վերնագիրը: Ասացինք, որ դա Ղարաբաղյան շարժման տարիներին էր, եւ Վեհափառ Յայրապետը՝ որպես մեծ հայրենասեր, չէր կարող շրջանցել այդ հարցը, եւ քննադատել էր երկրի բարձրագույն իշխանություններին այդ ազգամիջյան բախումը չլուծելու համար: Բնական է, որ այդ հատվածը իմ հարցազրույցում նշել էի, բայց «Վրաստան» թերթում այն չկար: Յասկանալի էր՝ այն օրերին Գլավլիտը դեռ գործում էր...

Ես երբեք կապերս չեմ խզել ո'չ Վրաստանի, ո'չ էլ «Սովետական Վրաստան» թերթի հետ: Տարիներ շարունակ ստացել եմ Թբիլիսիում լույս տեսնող «Սովետական Վրաստան», «Զարյա Վոստոկա» եւ «Լելո» թերթերը:

Ահա այսքանը: Յերիք է գլուխ գովեմ...

***ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ***
***«Սովետական Վրաստան» թերթի նախկին աշխատակից***

## «ՎՐԱՍՏԱՆԸ» ՄԻՇՏ ԷԼ ՅԱՍԵԼ ՈՒ ԱՌԱՋԻՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ԵՂԵԼ ՈՒ ՄՆՈՒՄ

Մեր սիրելի հոբելյար, շնորհավոր հարյուրամյակդ:

Ժամանակի հորձանուտում ավելի ու ավելի է կարեւորվում գոյությունդ: Մեր գյուղում, մեծից՝ փոքր սպասում են քեզ ու, հատկապես, հիշում այս չարաբաստիկ համավարակով պայմանավորված այն շրջանը, երբ փակվել էին մեր՝ Մառնեուլիի մունիցիպալիտետի ելումուտի ճանապարհներն, ու գործում էր խիստ կարանտին: Այդ օրերին «Վրաստանը» Մառնեուլիի հայության ամենաասպասված ու հավաստի լրատուն էր, որ չէր դադարեցնում իր գործունեությունը, ու որի էջերից ծանոթանում էինք կառավարության նոր որոշումներին եւ սահմանումներին: Թերթի խմբագիր Վան Բայբուրթյանն անում էր երբեմն անհնարը՝ միջքաղաքային եւ, ընդհանրապես, տրանսպորտի բացակայության պայմաններում, «Վրաստանը» Մառնեուլիի հայահոծ գյուղեր հասցնելու համար: Երբեւիցե, առիթ չեմ ունեցել շնորհակալություն հայտնել Ձեզ, պարոն Վան, ու նաեւ բոլոր այն «վրաստանցիներին», ովքեր այդ օրերին ցուցաբերում էին մեծ պատասխանատվություն եւ նվիրվածություն: Շնորհակալ ու երախտապարտ ենք բոլորիդ: Եվ այդուհանդերձ, երբ այս մասին գյուղում խոսում ենք, մեր գյուղի տարեցները չեն զարմանում: Ասում են՝ «Վրաստանը» միշտ էլ հասել է առաջիններից մեկը ու չի կորցրել իր հետաքրքրությունը՝ ժամանակի հետ համաքայլ ու բովանդակ ընթացքում: Ուզում ենք այս կարեւորությունը զգան նաեւ «Վրաստան» թերթն ընթերցող ապագա սերունդները՝ մասնակիցը լինելով իրենց սիրելի թերթի անսպառ ու անխափան հոբելյանների:



Սիրելի «Վրաստան», այս շնորհավորանքը ոչ միայն Աղքյորփի գյուղի հանրային դպրոցի մանկավարժների, աշակերտների, այլեւ ողջ գյուղի անունից է: Մեր ցանկությունն է՝ միշտ կենսունակ տեսնել մեր հարազատ «Վրաստանը»: Թող միայն վերելքներ լինեն, առաջընթաց ու հպարտության արժանի էջեր:

***ՎԻՈԼԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ***
***Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփի գյուղի հանրային դպրոցի տնօրեն***

## «ՎՐԱՍՏԱՆԸ» ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՅԱՅԵՐԻՆՆ ՈՒ ՎՐԱՑԻՆԵՐԻՆՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Յենց նրանից իմացա, որ Թբիլիսիում շուտով իր հարյուրը բոլորող հայատառ թերթ ունենք: Յիմա ժամանակ առ ժամանակ փորձում եմ կարդալ: Ավելին, ես այն երջանիկ վրացիներից եմ, ում մասին գրվել է «Վրաստանում»: Յարցազրույցում ես խոսել եմ դարավոր բարեկամների՝ վրացու եւ հայի մասին, այն կապի, որի ջատագովը հենց հարյուրամյա «Վրաստանն» է:

Ուզում եմ երախտիքս հայտնել խմբագրության աշխատակիցներին ու շնորհավորել հոբելյարներիդ: Որպես լրագրող՝ գիտեմ, թե որքան կարեւոր է վստահելի եւ օբյեկտիվ ինֆորմացիայի տարածումը, ինչը հաստատ հաջողվում է «Վրաստանին»: Ձեր թերթը նաեւ մերն է՝ մեր բազմազգ Վրաստանի հոգեւոր ժառանգությունն ու հպարտությունը:

Շնորհավոր, ուրեմն, մեզ միավորող բոլորիս հոբելյանը:

***ԼԵՎԱՆ ՑԱԼՈՒՂԵԼԱՇՎԻԼԻ***
***Լրագրող***

### ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

## ... ԵՎ ՌԱՅԽՍՏԱԳԻ ՊԱՏԻՆ ԳՐԱՌՎԵՑ՝ «ՂԶԼՔԻԼԻՍԱՅԻՑ՝ ԲԵՌԼԻՆ» Վ.Մ.ՂՈՒԼԻԿՅԱՆ

***Յայրենական մեծ պատերազմի տարիներին սխրանքներով լի մարտական ուղի է անցել սակրավոր ավագ սերժանտ Վարազդատ Մակարի Ղուլիկյանը: Նա ծնվել է 1921 թ. Ծալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղում, հողագործի ընտանիքում: Սովորել է տեղի տարրական դպրոցում, այնուհետեւ իր նվիրված աշխատանքով աչքի է ընկել հայրենի գյուղի շենացման գործում: Վարազդատ Ղուլիկյանը մահացել է 92 տարեկան հասակում եւ հուղարկավորվել հարազատ գյուղում:***

Յայրենական մեծ պատերազմի սկզբից Վ.Ղուլիկյանը զորակոչվել է բանակ եւ ծառայել 89-րդ Յայկական հրաձգային դիվիզիայի 280-րդ սակրավորների հատուկ գումարտակում: Կռվել է գերմանական ֆաշիստների դեմ Կովկասյան նախալեռներում, Ղրիմում, Թամանյան թերակղզում, Լեհաստանում, Գերմանիայում եւ հասել մինչեւ Էլբա գետը:

1943 թ. սեպտեմբերի 25-ին հրամանատարության կողմից կազմված նրա պարգեւատրման թերթիկում գրվել է. «1943թ. սեպտեմբերի 6-19-ը, Վ.Ղուլիկյանը գնացել է հետախուզության եւ անցուղիներ բացել ականապատված դաշտի ու փշալարափակոցների միջով: Երեք անցուղի է բացել 526-րդ հրաձգային գնդի համար, 6 անցուղի՝ Դոլգայա լեռան վրա՝ 400-րդ ու 390-րդ հրաձգային գնդերի տեղամասերում՝ դրանով իսկ ապահովելով մեր զորքերի հարձակումը: Խորհրդային բանակում Վ.Ղուլիկյանը վնասազերծել է 320 ական»: Այդ խիզախության համար նա պարգեւատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

...1945թ. մարտի 15-ին, անսպասելի վքարի է ենթարկվել վիրավորներին Օդեր գետի արեւմտյան ափից դեպի սովետական ափը տեղափոխող լաստանավը, Վ.Ղուլիկյանը նետվելով սառցակալած ջրերի մեջ՝ փրկել է խեղդվող ծանր վիրավոր մարտիկներին: Երեք գիշեր շարունակ սերժանտ Վ.Ղուլիկյանն իր ջոկատով հակառակորդի գնդացրին եւ ականանետային ուժեղ կրակի տակ տեղադրել է 1200 հակատանկային եւ 4400 հակահետեւակային ական: Ապրիլի 13-ի լույս 14-ի գիշերը Ղուլիկյանը երկու անցուղի է բացել ականապատված արգելափակոցների միջով՝ թշնամու խրամատներից ընդամենը 30 մետր հեռավորության վրա: Այդ խիզախությունների համար նա պարգեւատրվել է «Փառքի առաջին աստիճանի» շքանշանով:

Սերժանտ Վ.Ղուլիկյանը իր ջոկատով կարեւոր ավանդ է ներդրել նաեւ Բեռլինի Յումբոլդ-Յայն պաշտպանիչ անտառաշերտի երկու անառիկ ամրոցների գրավման գործում՝ թշնամու մահաբեր կրակի տակ պայթուցիկ նյութեր փոխադրելով դրանց մոտ: Սակրավորների ջանքերով ամրոցների հիմքերում կուտակված պայթուցիկ նյութերը դղրդյունով քանդել են անառիկ թվացող ամրոցների պատերը, եւ ֆաշիստական կայազորը սպիտակ դրոշ է պարզել Թամանյանցիների առաջ: Այդ սխրանքի համար սակրավոր Վ.Ղուլիկյանը եւ նրա մարտական ընկերներից շատերը պարգեւատրվել են «Յայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով:

Վ.Ղուլիկյանն իր մարտական ընկերների հետ՝ հաղթանակի բերկրանքը ճաշակել են 1945թ. մայիսի 9-ին, պարտված ֆաշիզմի որջում՝ Բեռլինում եւ Ռայխստագի պատին գրել է. «Ղզլքիլիսայից՝ Բեռլին». Վ.Մ.Ղուլիկյան:

Պատերազմի հաղթական ավարտից հետո, նա 1946թ. զորացրվել ու վերադարձել է հայրենի գյուղ: Երկար տարիներ աշխատել է կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայի վարիչ:

Այնուհետեւ, Ղուլիկյանն ակտիվ մասնակցություն է ունեցել գյուղում տեղի ունեցող բոլոր հասարակական եւ քաղաքական միջոցառումներին: Մի քանի անգամ ընտրվել գյուղխորհրդի եւ շրջխորհրդի պատգամավոր, եւ իր ընտրողների սպասելիքները կատարել բարեխղճորեն ու պատասխանատվությամբ:

1970թ. ապրիլի 25-ին, նա Մոսկվայում մասնակցել է Յայրենական պատերազմի հաղթանակի 25-րդ տարեդարձին նվիրված Փառքի երեք շքանշանների ասպետների համամիութենական հավաքին: Այդտեղ էլ Վ.Ղուլիկյանը Խորհրդային Միության պաշտպանության նախարարի կողմից ստացել է անվանական ժամացույց: Երկու անգամ մասնակցել է Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսին, արժանացել պարգեւների:

Աշխատանքի ու պատերազմի վետերան. «Փառքի» հերոս Վ.Ղուլիկյանը երկարամյա աշխատանքային գործունեության եւ հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգեւատրվել է նաեւ «Կարմիր աստղ» (երկու անգամ), «Յայրենական պատերազմի առաջին եւ երկրորդ աստիճանի», «Աշխատանքային կարմիր դրոշ», «Աշխատանքային փառքի երրորդ աստիճանի» շքանշաններով, նրա կուրծքը զարդարում էին 15 շքանշաններ ու մեդալներ:

Կանցնեն շատ ու շատ տարիներ, բայց երբեք չեն խամրի Վարազդատ Ղուլիկյանի եւ նրա նմանների հերոսական սխրանքները, մարդկանց, ովքեր երկրի ազատության եւ անկախության համար չեն խնայել իրենց արյունն ու կյանքը:

***ՌԱՖԻԿ ԱՎԵՏՅԱՆ***
***ք.Երեւան***

COVID - 19

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱԿՏԻՎԱՆՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## ՊԱՏՎԱՍՏՎԵԾԻՆ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մայիսի 4-ից երկրում մեկնարկեց 18 տարեկանից բարձր քաղաքացիների պատվաստումը չինական «Սինոֆարմ» տեսակի պատվաստանյութով:

Ապրիլի 19-ից Վրաստանում սկսվեց պատվաստման համար համընդհանուր գրանցում: Առողջապահության նախարարության կողմից հատուկ ստեղծված՝ https://www.moh.gov.ge/covid-chart/register գրանցման հարթակում քաղաքացիներն իրավունք ունեն մի քանի տեսակի (նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 3) պատվաստանյութ ընտրել եւ դրանց առկայության դեպքում արդեն պատվաստվել:

Պատվաստման գործընթացն իրականացվում է կամավորական սկզբունքով: Պատվաստվելու համար նախապես պետք է գրանցվել:

Վրաստանի կառավարությունում գործող միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, մայիսի 5-ից սկսվեց կորոնավիրուսի դեմ կառավարության եւ խորհրդարանի անդամների պատվաստումը:

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄԴՐԵԼԻՁԵ. «ԳՏՆՎՈՒՄ ԵՆՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՓՈՒԼՈՒՄ, ԵՎՍ 2-3 ՇԱԲԱԹ ՊԵՏՔ Է ԽՍՏՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԵՆՔ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ»

***Ինչպես հայտարարեց Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեն, Վրաստանում վավերացվել է կորոնավիրուսի տարածման երրորդ ալիքի գագաթնակետը, որն առնվազն կարող է շարունակվել 2-3 շաբաթ:***



- Ներկայումս վարակումների կրկնապատիկ թիվ է գրանցվում: Ապրիլի 25-ից Վրաստանում ընթանում է վարակման երրորդ ալիքը, որը գրեթե հասել է գագաթնակետին: Այն կշարունակվի առնվազն 2-3 շաբաթ, որի ընթացքում մենք խստորեն պետք է հետեւենք տրված հանձնարարականներին,- հայտարարեց Ամիրան Գամդրելիձեն:

Անդրադառնալով պատվաստման գործընթացին՝ Ամիրան Գամդրելիձեն նշեց, որ եթե բնակչության 60 տոկոսը պատվաստանյութի կրկնակի դեղաչափ ստանա, մենք արդեն փողոցում կհանենք պաշտպանիչ դիմակները: Նրա հավաստմամբ, առանց պատվաստումների համաճարակը չի ավարտվի:

Նշենք, որ օրեր առաջ Ամիրան Գամդրելիձեն ուղիղ եթերով պատվաստվել է «Sinopharm» պատվաստանյութով:

# ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ի՞ՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ ԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի իշխանությունները կորոնավիրուսի դեմ պատվաստումների գործընթացի խրախուսման նպատակով նոր քարոզարշավ են սկսել: Երկրում սկսվեց գործադիր եւ օրենսդիր մարմինների անդամների ցուցադրական պատվաստումը: Պատվաստվում են նաեւ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները: Իր հերթին, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը սկսել է մշակել այսպես կոչված կանաչ անձնագրի հիմնադրույթը, ըստ որի, պատվաստումն անցած քաղաքացիները կկարողանան օգտվել որոշակի արտոնություններից:

## Ի՞ՆՉ Է ԾՐԱԳՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացված միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում քննարկվեց այսպես կոչված կանաչ անձնագրի թեման: Նշվեց, որ պատվաստման երկու դեղաչափ ստացած քաղաքացիներին, բացի «Կովիդ-անձնագրերից», կընձեռվի նաեւ համակարգող խորհրդի որոշմամբ պատվաստումն անցած անձանց համար սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորություն»: Ինչպես հայտարարեց վարչապետը, մոտ օրերս հանրությանը կներկայացվի վերոնշյալ արտոնությունների լրիվ ցուցակը:




Նիստում նշվեց նաեւ, որ պատվաստումների գործընթացում առանձնակի առաջնահերթություն է տրվում զբոսաշրջության ոլորտում աշխատող մարդկանց, ինչպես նաեւ հասարակական տրանսպորտի վարորդների ու վերահսկիչների պատվաստմանը:

Բացի այդ, էկոնոմիկայի նախարարությունն ու դրա ենթակառույց զբոսաշրջության վարչակազմը համատեղ աշխատանք են ծավալել տարբեր ասոցիացիաների հետ, որպեսզի ձեւավորվեն ռեստորանների, հյուրանոցների, զբոսաշրջային ընկերությունների հատուկ ցուցակները, որոնց աշխատակիցները կամավոր, սակայն կազմակերպված կանցնեն պատվաստումը:

## Ի՞ՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍԱՀՄԱՆՎԵՆ «ԿԱՆԱՉ ԱՆՁՆԱԳԻՐ» ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Ինչպես արդեն նշեցինք, դեռեւս հայտնի չէ, թե ինչ արտոնություններ կսահմանվեն պատվաստման լրիվ կուրսն անցած քաղաքացիների համար, թեպետ Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեի խոսքով, պատվաստման լրիվ կուրսն անցած քաղաքացիների համար արտոնությունների փաթեթը կկազմվի տարբեր երկրներում փորձարկված տաբերակների նկատառումով:

- Ներկա դրությամբ, ուսումնասիրում ենք աշխարհի տարբեր երկրներում այդ ուղղությամբ կիրարկվող տարբերակները,- հայտարարեց Պաատա Իմնաձեն եւ հավելեց, որ, ամենայն հավանականությամբ, նման պատվաստումն անցած անձինք կկարողանան առանց սահմանափակումների, առանց դիմակի գտնվել փակ տարածքներում եւ այլ մարդաշատ վայրերում, ռեստորաններում, առեւտրի կենտրոններում, ազատ երթեւեկել պարետային ժամին:

Ավելացնենք, որ մայիսի 3-ին Եվրահանձնաժողովը Եվրամիության անդամ երկրներին կոչ արեց պատվաստումն անցած քաղաքացիների համար վերացնել ուղեւորությունների հարցում կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումները: Եվրոպայի առանձին երկրներում ճանապարհորդելու իրավունք է վերապահվում այն քաղաքացիներին, ովքեր անցել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հավաստագրված պատվաստանյութով պատվաստումը:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԿԻՐԱՐԿՎԵՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում պատվաստման լրիվ կուրսն անցած մարդկանց համար սահմանվելիք արտոնությունների հարցով, մենք դիմեցինք Վրաստանի խորհրդարանի առողջապահության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Լադո Կախաձեին:

Նրա խոսքով, կիրարկվելիք արտոնությունների հիմնադրույթը ներկայումս մշակվում է Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի կողմից:

- Միանշանակ կարող եմ ասել, որ մշակվում է հիմնադրույթ, ըստ որի, պատվաստումն անցած այն քաղաքացիները, ովքեր անվտանգ են, կունենան արտոնություններ: Թե ի՞նչ արտոնություններ կսահմանվեն, դեռեւս հայտնի չէ,- ասաց Լադո Կախաձեն:

Վարակաբան Իրակլի Խմալաձեի հավաստմամբ, պատվաստումն անցած քաղաքացիների համար արտոնությունների սահմանումը դրական ազդեցություն կգործի վիրուսի տարածման դեմ պայքարի, ինչպես նաեւ պատվաստումների գործընթացի ակտիվացման վրա:

- Առանց դիմակի յուրաքանչյուր անձ, ով պատվաստում չի անցել, յուրովի վտանգ է ներկայացնում շրջապատի համար, ուստի համոզված եմ, որ պատվաստումն անցած քաղաքացիների արտոնությունների սահմանումը զգալի ազդեցություն կգործի պատվաստվելու ցանկություն ունեցողների թվի ավելացման վրա,- հայտարարեց վարակաբանը:

*Խորագիրը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ*

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԾ 157 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 157 027 965-ից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 274 351-ը: Ապաքինվել է 134 միլիոն 379 հազար 472 մարդ:*

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **33 375 546** դեպք: Այստեղ մահացածների թիվը **594 127** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **21 640 382**-ի, մահացածներինը՝ **235 189**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **15 009 023**, մահացել՝ **417 176** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 728 090**, վարակի հետեւանքով մահացել՝ **105 850** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Թուրքիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Իսպանիան ու Գերմանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **218 681-ի**, մահացածներինը՝ **4 209-ի**, ապաքինվածներինը՝ **203 307**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **325 407** մարդ: Վարակից մահացել է **4 650,** ապաքինվել՝ **302 860** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **319 266,** մահացել՝ **4 245,** ապաքինվել՝ **298 807** մարդ:

*Մայիսի 7-ին կորոնավիրուսով վարակման* ***1547*** *նոր դեպքերից* ***907-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 141, Իմերեթիում՝ 115, Քվեմո Քարթլիում՝ 77, Շիդա Քարթլիում՝ 43, Գուրիայում՝ 33, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 117, Կախեթիում՝ 52, Մցխեթա-Մթիանեթիում՝ 46, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 3, Սամցխե-Ջավախեթիում՝ 13:***

# ԹԵՆԳԻԶ ՑԵՐՑՎԱՁԵ. «COVID 19-ԻՑ ՄԱՀՎԱՆ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ՊԱՏՃԱՌԸ ԲՈՒԺՄԱՆ ՈՒՇԱՑՈՒՄՆ Է»

***Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն, վարակաբան Թենգիզ Ցերցվաձեն, անդրադառնալով կորոնավիրուսից մահվան հիմնական պատճառներին, նշեց, որ վերջերս աշխարհում կտրուկ աճ են արձանագրել COVID 19-ով վարակման ու մահվան դեպքերը:***



Նրա խոսքով, աշխարհի շատ երկրներում արդեն մեկնարկել է կորոնավիրուսի երրորդ ալիքը եւ, չնայած պատվաստման գործընթացի ուշ սկսելուն, Վրաստանին դեռեւս հաջողվում է վերահսկել իրավիճակը:

Թենգիզ Ցերցվաձեն կրկին անգամ կոչ արեց ժամանակին ձեռնարկել միջոցներ վարակի տարածումը կանխելու համար եւ նշեց, որ իրենց անցկացրած հետազոտության արդյունքում պարզել են Վրաստանում կորոնավիրուսից մահերի հիմնական պատճառները, որոնցից ամենատարածվածը բժիշկներին ուշ դիմելն է: Վրաստանում, ի դեպ, կորոնավիրուսից մահերի թիվը, ցավոք, անցել է 4000-ից, վարակից ամեն օր միջին հաշվով մահանում է 8 մարդ:

Վարակաբանն առանձնացնում է հիմնական պատճառները՝

1. Բուժառուն (պացիենտը) թեստ հանձնելու նպատակով սովորաբար ուշացած է ներկայանում COVID կլինիկա:

2. COVID-ի դրական պատասխանն իմանալուց հետո բուժառուն, բժշկին դիմելու փոխարեն, փորձում է ինքնաբուժությամբ զբաղվել:

3. Անտեսելով ընտանեկան բժշկի կամ շտապօգնության բժիշկների խորհուրդը՝ բուժառուն հրաժարվում է հոսպիտալացումից:

4. Հազվադեպ, ընտանիքի կամ շտապօգնության բժիշկը չի կարողանում սահմանել խնդրի լրջությունն ու խորհուրդ չի տալիս հոսպիտալացվել:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՉԸՆՏՐԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ըստ Հայաստանի սահմանադրության, եթե խորհրդարանում երկու անգամ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովը լուծարվում է: «Իմ քայլը» խմբակցությունը հայտարարել էր, որ Նիկոլ Փաշինյանի թեկնածությունն առաջադրում է՝ առաջնորդվելով տվյալ ընթացակարգով:

Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունների ղեկավարների հետ հանդիպումներից հետո հայտարարել էր, որ երկրում հունիսի 20-ին կանցկացվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 140-րդ հոդվածի 3-րդ եւ 6-րդ մասերի, վարչապետի ընտրության հարցը կքննարկվի մայիսի 10-ին, իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԷՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ

*Մայիսի 6-ին Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի (ԱԳ) նախարար Սերգեյ Լավրովը պաշտոնական այցով գտնվում էր Երեւանում: Այցի շրջանակներում, ՌԴ ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի, Հայաստանի ԱԳ նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանի հետ:*



Հանդիպումներում քննարկվեցին հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների օրակարգին եւ զարգացմանը վերաբերող հարցեր, անդրադարձան Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակին եւ հումանիտար հարցերի կարգավորմանը:

Նիկոլ Փաշինյանը Սերգեյ Լավրովի ուշադրությունը հրավիրեց Ադրբեջանի կողմից շարունակվող հակահայկական հռետորաբանության վրա եւ անդրադարձավ Բաքվում բացված, այսպես կոչված, «ռազմավարի պուրակին», որտեղ ներկայացված են հայատյաց, արժանապատվությունը նսեմացնող բովանդակությամբ ցուցադրություններ՝ անընդունելի համարելով այդ գործում երեխաների, դպրոցականների ներգրավումը, ինչը եւ այսօր արվում է Ադրբեջանի կողմից:

ՌԴ արտգործնախարարը կարեւորեց տարածաշրջանում կառուցողական մթնոլորտի եւ երկխոսության ձեւավորման ուղղությամբ համատեղ ջանքերը: Սերգեյ Լավրովն արդյունավետ գնահատեց նաեւ Հայաստանի իր գործընկերոջ հետ ունեցած բանակցությունները: Նա վստահություն հայտնեց, որ մոտ ապագայում կհաջողվի լուծել Արցախյան երկրորդ պատերազմից հետո բոլոր պահվող անձանց հայրենիք վերադարձնելու հարցը:

Կողմերը մտքեր փոխանակեցին տարածաշրջանային իրավիճակի եւ անվտանգային մարտահրավերների շուրջ: Աշխատանքային այցով Երեւան ժամանած Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանի ուղեկցությամբ, մայիսի 6-ին այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց հուշահամալիրի առջեւ, ծաղիկներ խոնարհեց անմար կրակի մոտ՝ հարգելով Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Այնուհետեւ, Լավրովը Ծիծեռնակաբերդի Հիշողության պուրակում ջրեց 2007 թվականին իր տնկած եղեւնին:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓԱԿ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ

*Մայիսի 5-ին Հայաստանի Ազգային ժողովը փակ նիստում քննարկեց Ապրիլյան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը:*

Զեկույցի քննարկումը խորհրդարանի որոշմամբ անցկացվում է փակ նիստում, քանի որ այն պարունակում է պետական գաղտնիքներ:

2016-ի Ապրիլյան քառօրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով, Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը ստեղծվել է 2019թ. մայիսի 31-ին: Հանձնաժողովի նախագահը խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Իմ քայլը» խմբակցության անդամ Անդրանիկ Քոչարյանն է:

2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի նիստերին հրավիրվել եւ մասնակցել են ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը եւ մի խումբ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ



*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ նախաձեռնությամբ, ըստ որի, նա Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին եւ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին առաջարկեց արտահերթ ընտրություններին մասնակցել «Ազգային համաձայնության դաշինք» անվանումը կրող ցուցակով:*

Մեկնաբանելով Հայաստանի առաջին նախագահի նախաձեռնությունը՝ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փանշինյանը հայտարարեց, որ այդ նախաձեռնությամբ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը որոշել է անել ավազակապետական հեղափոխություն:

- Լեւոն Տեր-Պետրոսյանն իր ընդհիմադիր քաղաքական գործունեության ընթացքում երկու անգամ փորձել է անել իշխանափոխություն կամ հեղափոխություն, մեկը՝ 2008 թվականի ժողովրդավարական հեղափոխությունը, որը չի ստացվել, երկրորդը եղել է բուրժուադեմոկրատական հեղափոխությունը, որի ճակատագիրը բոլորս գիտենք: Պարոն Տեր-Պետրոսյանը որոշել է կրկին փորձել եւ այս անգամ անել ավազակապետական հեղափոխություն,- ասաց Նիկոլ Փաշինյանն ու վստահեցրեց, որ ավազակապետական հեղափոխությունը չի ստացվի:

## ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ «ՎԵՐԱԾՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՎ ՀՅԴ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ



*Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը կգլխավորի «Վերածնվող Հայաստան» կուսակցության եւ Հայ հեղափոխական դաշնակցության նախընտրական դաշինքը:*

Այս մասին ասված է նաեւ «Վերածնվող Հայաստան» կուսակցության ֆեյսբուքյան էջում:

«Հաշվի առնելով Հայաստանում եւ Արցախում ստեղծված օրհասական վիճակը, ելնելով գաղափարակից եւ համախոհ քաղաքական ուժերի հետ միասնաբար հանդես գալու անհրաժեշտությունից՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը որոշում է կայացրել հնարավոր արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցել Հայ հեղափոխական դաշնակցության հետ նախընտրական դաշինքով, որը կգլխավորի Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը»,- ասված է հայտարարության մեջ:

### ԼԱՏՎԻԱՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***Լատվիան պաշտոնապես ճանաչեց եւ դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: Կողմ արտահայտվեցին Սեյմի 100 անդամներից 58-ը:***

***Դեռեւս 2020 թվականի ապրիլի 24-ին Լատվիայի խորհրդարանի երկու ուժեր, որոնք նաեւ իշխող կոալիցիայի անդամներ են՝ «Նոր պահպանողականների» եւ «Զարգացմանը՝ «Այո» կուսակցություններն արդեն արել էին Հայոց ցեղասպանությունն ընդունող եւ դատապարտող հայտարարություններ: Այս ուժերի, ինչպես նաեւ «Համաձայնություն» կուսակցության ներկայացուցիչների մեծ մասի նախաձեռնությամբ, 2021 թվականի փետրվարից սկսվեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որի արդյունքում բանաձեւ-հայտարարություն ներկայացվեց ապրիլի 23-ին: Ապրիլի 29-ին նախնական բանաձեւի տարբերակը առարկություններով հետաձգվեց մեկ շաբաթով: Բանաձեւի փոփոխված տարբերակ առաջարկեց Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը, որի շուրջ նույնպես ծավալվեց ինտենսիվ քննարկում, եւ որը նույնպես վերջին երկու ամիսների ընթացքում զուգահեռ աշխատանքներ է ծավալել այս ուղղությամբ:***

### ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՆՈՐ ՌԵԿՈՐԴՆԵՐ

***Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, կառավարության նիստում անդրադառնալով աշխատատեղերի խնդրին, ասաց.***

***- Մենք Հայաստանում գրանցված աշխատատեղերի նոր ռեկորդներ ենք սահմանում: Այսինքն, ամեն անգամ արձանագրում ենք, որ աճում է գրանցված եւ աշխատավարձ վճարվող աշխատատեղերի թիվը: Համահարթ եկամտահարկի կիրառումից հետո տեսնում ենք, որ ստվերից դուրս են գալիս աշխատատեղերը: Սրա արդյունքում, մենք ունենք միջին աշխատավարձի աճ: Այսինքն՝ ոչ միայն աշխատատեղերն են ստվերից դուրս եկել, այլեւ աշխատավարձերը: Սրանք դարակազմիկ բարեփոխումներ են Հայաստանի համար:***

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՐՐՈՐԴ ԱԼԻՔԸ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ Է ԳՐԱՆՑՈՒՄ

***Մայիսի 6-ին, երկրի կառավարության նիստում վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանում կորոնավիրուսի երրորդ ալիքը կայունացման որոշակի միտումներ է գրանցում, ըստ երեւույթին, կառավարությունը բավական լավ է կառավարել ու կառավարում կորոնավիրուսի համավարակը:***

***Վարչապետի պաշտոնակատարը գոհունակություն հայտնեց պատվաստումների ավելացման հետ կապված միտումներից եւ հիշեցրեց, որ կառավարության անդամների մեծ մասն արդեն պատվաստվել է:***

### «MODERNA»-Ն՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

***Աշխարհահռչակ հայ գործարար Նուբար Աֆեյանի հիմնադրած «Moderna Therapeutics» կենսատեխնոլոգիական ընկերության «Moderna» տեսակի պատվաստանյութը Պատվաստանյութերի համաշխարհային կոնգրեսում ճանաչվել է կորոնավիրուսի դեմ աշխարհի լավագույն պատվաստանյութ:***

***Հաղթողի հավակնորդների մեջ են եղել նաեւ «Pfizer», «Sputnik V», «AstraZeneca» պատվաստանյութերը:***

***2020թ. նոյեմբերի 16-ին «Moderna»-ն հայտարարել է կորոնավիրուսի պատվաստանյութի՝ մոտ 95 տոկոս արդյունավետության մասին:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍ



***13.05.2021 Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն***

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, 35 օրվա շարժունակությամբ՝ ապրիլի 30-ից մինչեւ հունիսի 3-ը՝ հինգշաբթի: Հարությունից հետո Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա եւ երեւում Իր աշակերտներին:

Հայ Առաքելական եկեղեցում մայիսի 1-ը հիշատակվում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու օր:

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաեւ ժողովրդական հանդիսություններով եւ կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ): Հնում Համբարձման օրվա տոնակատարություններն սկսվում էին չորեքշաբթիից: Կանայք այդ օրն անվանում էին «Ծաղկամոր կիրակի»:

Տոնի ժամանակ ամենուրեք կատարվում է վիճականահություն եւ պարզվում, թե տվյալ տարում որ աղջիկն է ամուսնանալու: Տոնի օրը ջրով լի կժերի մեջ գցում են ծաղիկների տերեւներ եւ աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետեւ դեռահաս մի աղջկա հագցնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները եւ շրջում տնետուն: Այս ամենը զուգորդվում են երգերով, կատակներով եւ դրամահավաքով: Հետո սկսվում է վիճակահանությունը, ում պատկանում է առաջին իրը, նրան մոտալուտ ամուսնություն է սպասվում: Կժից հանում են մյուս իրերը, որոնց պատկանող անձանց խրատներ եւ բարեմաղթանքներ են տրվում:

Մինչ օրս, մասնավորապես Էջմիածնում եւ հարակից գյուղերում պահպանվել է այս գեղեցիկ ավանդույթը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

# ԱՆԱՀԻՏ ՍՏԵԼՄԱՇՈՎԱՆ՝ «ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՀԱՄԱԿՐԱՆՔ» ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ



***Ապրիլի 30-ից մայիսի 5-ը Մոսկվայում անցկացվեց Դենիս Մացուեւի «Grand Piano Competition» երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթը: Ելույթ ունեցան 7 երկրից 15 դաշնակահարներ: Առաջին փուլում նրանք հանդես եկան մեներգային համերգով, իսկ երկրորդ փուլում՝ սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ:***

Անահիտն անցավ առաջին փուլը եւ ընդգրկվեց 7 դափնեկիրների շարքում: Նա նվագեց Կոմիտաս, «Մարալի» եւ «Շուշիկի» ստեղծագործությունները՝ «Պարեր դաշնամուրի համար»-ից:

Չայկովսկու անվան համերգասրահում մրցույթի դափնեկիրներն ու դիպլոմակիրներն ստացան հատուկ մրցանակներ ու պարգեւներ: Համացանցում, քվեարկության արդյունքում, Վրաստանը ներկայացնող ախալքալաքցի Անահիտ Ստելմաշովան հաղթեց «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում:

Հիշեցնենք, որ Անահիտը 15 տարեկան է, ծնվել է Ախալքալաքում: 6 տարեկանից զբաղվում է երաժշտությամբ: 2017 թվականից սովորում է Թբիլիսիի Է.Միքելաձեի անվան երաժշտական կենտրոնական ուսումնարանում (Նինո Քաթամաձեի դասարանում): Ելույթներ է ունեցել Մոսկվայի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, Բաթումիի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Առնո Բաբաջանյանի անվան պատանի եւ երիտասարդ դաշնակահարների IV միջազգային մրցույթ-փառատոնի (2017, II մրցանակ), Վրաստանում «Batumi Music Fest» V միջազգային փառատոնի (SOS-Talents հիմնադրամի Գրան-պրի), XX միջազգային հեռուստատեսային մրցույթ «Մարդուկ-Ջարդուկը» (2019, «Արծաթե Մարդուկ-Ջարդուկ»), Վրաստանում Թամազ Ամիրեջիբիի անվան դաշնակահարների VI միջազգային մրցույթի (2020, I կարգի պարգեւ եւ հատուկ մրցանակ) դափնեկիր է, ինչպես նաեւ ԱՄՆ-ում «American Protege Concerto Competition» միջազգային մրցույթի (2020, 1-ին մրցանակ) եւ այլ մրցույթների դափնեկիր: Մասնակցել է Վլադիմիր Սպիվակովի Հիմնադրամի (2020) «Մոսկվան հանդիպում է ընկերներին» փառատոնի առցանց համերգին: Անահիտը «Քնար» (Վրաստան), «SOS-Talents» (Ֆրանսիա), «Atken Armenian» (Կանադա) հիմնադրամների անվանական թոշակառու է:

ԹԵՆԻՍ

## ՆԻԿՈԼՈԶ ԲԱՍԻԼԱՇՎԻԼԻՆ՝ ՄՅՈՒՆԽԵՆԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ



Վրացի թենիսիստ Նիկոլոզ Բասիլաշվիլին նվաճեց իր կարիերայի հինգերորդ տիտղոսը: Մյունխենի ATP250 կարգի մրցաշարի եզրափակիչ փուլում նա երկու սեթում հաղթեց գերմանացի Յան-Լեոնարդ Շտրուֆին:

Մրցաշարի ընթացքում Բասիլաշվիլին հիանալի էր խաղում եւ վերջին երկու հանդիպումներում ոչ մի պարտություն չկրեց:

Այս վերջինը Բասիլաշվիլու կարիերայի առաջին տիտղոսն է, որը նա նվաճեց՝ չպարտվելով սեթում:

Մյունխենում կայացած հաղթանակի շնորհիվ, Բասիլաշվիլին առաջադիմեց չորս հորիզոնականով եւ ընդհանուր վարկանիշային աղյուսակում զբաղեցրեց 31-րդ տեղը, որը թույլ կտա նրան հայտնվել Ռոլան Գարոսի մրցաշարի մասնակիցների շարքում:

Բասիլաշվիլու հաջորդ մրցաշարը Մադրիդի «Մաստերսն» է: Այնտեղ առաջին փուլում նա կհանդիպի ֆրանսիացի Բենուա Պերսին, ով աշխարհի դասակարգման մեջ 35-րդ համարն է:

Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը, «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են Ռաֆիկ, Գագիկ եւ Կարինե Աղաջանյաններին, սիրելի մոր՝

***Սեդա Սարիբեկի***
***ՄԽԻԹԱՐՅԱՆ-ԱՂԱՋԱՆՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:

Հոգեհանգիստը՝ մայիսի 8-ին, հուղարկավորությունը՝ մայիսի 9-ին, ժամը 13:00-ին: Հասցեն՝ Թբիլիսի, Օրթաճալա թաղ., Կրծանիսիի փողոց թիվ 20:





## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հերոս «Սասունցի Դավիթ» էպոսում: 4.Ասիական պետություն: 9.Գետ Հայաստանի Սյունիքի մարզում: 12.Քաղաք Թուրքիայում: 13.Վ.Լենինի սիրելի քաղաքը: 14.Վրաց երգչուհի … Սոխաձե: 16.Արեւմտահայ գրող Սիամանթոյի իսկական անունը: 17.Արեգակնային համակարգի մոլորակ: 19.Մաշտոցյան այբուբենի 13-րդ զինվորը: 20.Հայոց այբուբենի տառերից: 21.…հա, …դո: 22.… վաճառվում են թատրոնի տոմսարկղերում: 25.Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի կեղծանունը: 28.Վառ կարմիրը: 29.«Հողմը մեգով երկինքն առնում, Գալարվում է …ը ձյան» («Ձմեռվա իրիկունը»): 31.Ամպի գոռոցը, ձայնը: 32.Վանա լճի կղզիներից: 34.Հացահատիկի տեսակ: 35.Օժանդակ բայ: 37.…, շտապեցիր, շտապեց: 40.Գրող Հովսեփ Շիշմանյանի գրական կեղծանունը: 42.Հովհ.Թումանյանի աղքատ ու խեղճ ընկերը: 43.Երեխայական …: 44.«… յերկինս եւ յերկրի» («Հայր մեր» աղոթքից): 45.Քիմիական …: 46.Իգական անուն: 47.… ու առաջ անել: 48.Մայր, մայրիկ (բրբ.): 50.Նիշ, քանակ: 51.Նկարչի նկարելիք մարդը: 53.Տարիքով, ծեր: 54.Փայտի կտոր: 56.Ե՛վ ծաղիկ, ե՛ւ աղջիկ: 58.Ձեթով պատել, յուղել: 59.Անմարդկային, ստոր: 60.Վրաց հայտնի գրող … Փոցխիշվիլի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Պետություն Եվրոպայում: 2. Ննռով հայտնի քաղաք Արեւմտյան Հայաստանում: 3.Արյունը խմող, արյունռուշտ: 5.Լեռ Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում: 6.Վրացական ֆիլմ «Օթարի …ն»: 7.Հայաշատ պետություն Ասիայում: 8.Վրաց հանրահայտ դերասանուհի: 10.Նենգ թշնամի, հակառակորդ: 11.…անոր, …յակ: 15.Ժամանակի միավոր: 18.Ջրային երկու տարածությունները միացնողը: 23.Ծովային փափկամորթ: 28.Մեծ վիպասան Րաֆֆու պատմավեպերից: 26.18-րդ դարի ֆրանսիացի խոշորագույն լուսավորիչ-փիլիսոփա: 27.Ստորադասական շաղկապ: 30.Վրաց հայտնի երաժիշտ Միխեիլ …: 33.Արեւմտահայ գրող: 36.Մեղուի տված բարիքը: 37.Միջնադարի հայ բանաստեղծ: 38.Ավ.Իսահակյանի ստեղծագործություններից՝ «…ի սերը»: 39.Լիրիկ բանաստեղծ: 41.Վրաց լեզվաբան, պրոֆեսոր, Թբիլիսիի պետհամալսարանի համահիմնադիրը: 43.Գրող Մեծարենցի ծննդավայր նահանգը: 45.… Աստված: 48. անուններ ի ցանց Թբիլիսիում: 49.Հովհ.Թումանյանի Բաքզագ հերոսը: 52.Վրաց երգիչ … Գուջաձե: 55.Ամերիկահայ երգչուհի Շերիլին Սարգսյանի կեղծանունը: 57.Բառի վերջածանց:

***Կազմեց Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Խաբեբա: 8.Ափսե: 10.Դրյու: 11.Սար: 13.Ամենա: 15.Ոստայն: 16.Բլան: 17.Մարի: 19.Կանուխ: 23.Իրավամբ: 26.Ռիկո: 27.Բրանլ: 28.Չամիչ: 29.Ժենյա: 32.Էվրա: 33.Շրջակա: 36.Մկա: 37.Ավազ: 39.Լճակ: 40.Նարտ: 42.Աղա: 43.Եսայի: 44.Ֆրեր: 45.Կուտ: 46.Ծծակ: 47.Ալտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հազալ: 2.Գեհեն: 3.Սադամ: 4.Մայոր: 5.Փեսա: 6.Կարն: 9.Փուսիկ: 12.Այրուկին: 14.Մատրա: 18.Եվլե: 20.Առարկա: 21.Նիմ: 22.Խոչ: 23.Իրավիճակ: 24.Անժամկետ: 25.Մայր: 30.Նշանած: 31.Աջարիա: 34.Ավարա: 35.Ազարտ: 38.Աղել: 41.Այծ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445